պարտական էր բողոքել դրա դէմ։ Այդ ժամանակը գուցէ ընդ. ժողովը վճռէր (և իմ կարծիքով՝ անպատճառ կը վճռէր) կանոնագրութիւնները աւելացնել այդ §-ը և խնդրել պաշտօնապէս թոյլատրութիւն Մեծ Իշխան փոխարքայից։

Ը՛նդ դիտեմ թէ՝ մինչև պատահեց, որ անցեալ տարուայ ընդ. ժողովի առաջին նստի արձանագրութեան մէջ (որը հրատարակվեց «Փարեզ» ամսագրում) այդ խմբագրութիւնը բողոքվին փոխված էր....

Այսպէս թէ այնպէս այս տարվայ փորձը կարծեմ բաւականին ցոյց տուեց կ ա ն դ ի պ ա տ ն ե ր ի ա ն հ ր ա ժ ե շ տ ա ն ա ւ թ ի ւ ն ը։

Մի նկատողութիւն ևս. ցանկալի է, որ ընդհանուր ժողովին ներկայ գտնվեն միայն ընկերութեան անդամները (իրքև վճռողական ձայն ունեցող) և ոչ մասնաւոր անձինք։ Դուցէ անցեալ տարի այս կամ այն ինչ պատճառով չէր կարելի կամ յարմար չը գտնվեցաւ կայացնել առաջին ընդ. ժողովը միմիայն ընկերութեան անդամներից և այդ եղաւ պատճառը որ, որքան ինձ յայտնի է, մինչև 7—8 մարդ ընտրողական ձայն ունեցան, այն ինչ մինչև այսօր էլ չեն վճարել անդամակցութեան վճարը։ Իմ կարծիքով, այդ անձանց ցուցակը վարչութիւնը պարտական է ներկայացնել ընդհանուր ժողովին իր տարեկան հաշուի հետ։

Կանոնագրութեան 8 §-ի ծանոթութիւնը թէ. «այն ի ս կ ա կ ա ն անդամը, որ վեց ամսուայ ընթացքում չէ վճարել իր տարեկան վճարը, համարվում է ընկերութեան անդամակցութիւնից հրաժարված» չէ կարելի բացատրել այնպէս իբր թէ ամեն մի մասնաւոր անձին մինչև այսօր դալ ընդ. ժողովին, մասնակցել ընտրութիւններին և հետևաբար առանց անդամակցութեան վճարը վճարելով, ասելով, որ նրանց կանոնագրութեան § 8 հիման վրա վեց ամիս ժամանակ է տրուած։ Դարձեալ կրկնում եմ, որ այդ յօդուածում ասած է, «այն ի ս կ ա կ ա ն անդամը եւայլն...» ուրեմն իսկական անդամը նախընթաց տարի պէտք է անդամ լինէր, որովհետև ամեն մարտի 9-ին սկսվում է տպագրական նոր տարին (մարտից մինչև մարտը), իսկ ընդհանուր ժողովի նիստի օրը մինչև ընտրութիւնները անցեալ տարուան վարչութեան անդամներ չեն կարող նոր ի ս կ ա կ ա ն անդամները ընտրել։

Ընկերութեան համար, ասում եմ ես, տպագրական տարին հաշվում է մարտի 9-ից մինչև հետևեալ տարուայ մարտի 9-ը և այդ ժամանակամիջոցին ընդունված անդամները, լինեն դրանք ընդունված մարտին, յուլիսին, հոկտեմբերին՝ մի և նոյն է, վճարած տարեկան անդամակցութեան վճարը հաշվում է մինչև առաջիկայ տարուայ մարտի 9-ը և այդ օրից դրանք, եթէ ցանկանում են իրանց անդամակցութեամբ օգուտ բերել մի տգեղային հիմնարկութեանը, նորից վճարելու են անդամակցութեան վճարը մինչև հետևեալ տարուայ մարտի 9-ը և այլն։

Ուրեմն եթէ անցեալ տարի մի քանի անձինք օգուտ քաղեցին հանգամանքներից (որովհետև ընկերութիւնը նոր էր կազմակերպվում) և անիրաւ վարվեցան, այս տարի գոնէ այդպիսի հրեւոյթները չը պէտք է տեղիք ունենան և դրա առաջն առնելու համար ես կառաջարկէի վարչութեանը այս տարուան հրաւիրատոմսակներում խնդրել ընկերութեան անդամներին իրանց հետ բերել և ընդ. ա ն դ ա ն ա ր ա գ ի ր ն ե ր ը, որոնք ցոյց կը տան որ նրանց ներկայացնողները իրաւ ընկերութեան իսկական անդամներ են։

Վերջացնելով իմ այս երկու խօսքս չեմ կարող չը յիշեցնել ընկերութեան վարչութիւնը, որ ամեն տեսակ ընկերութիւնների ապրութեան համեմատ, հապիւ թէ աւելորդ լինի որ առաջ յայտարարել այն հարցերի ցուցակը, որ նա իր կողմից առաջարկելու է ընդ. ժողովին և ի հարկէ ցանկալի է, որ այդ ցուցակը ունենայ ոչ թէ մի պաշտօնական ձև (այլ խօսքերով ասած՝ չոր ու ցամաք), այլ, որքան հնարաւոր է, բացատրած պէտք է լինի։

Միրզա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՍ մեզ գրում են. «Վերջին տարիներում տեղի ունեցած մեծ թանգութիւնը և նրանից առաջացած տնտեսական նեղութիւնը տարփոցին մեր գիւղացի ժողովրդին նորից դիմել բարեխնամ տէրութեան օգնութեանը։ Այս միջոցին տասնաւոր խնդիրներ Շիրակի բազմաթիւ գիւղերից ներկայացրած են Կարսի նոր նահանգապետ գեներալ Գրեսմանին, թոյլատրութիւն խնդրելով Կարսի նահանգը գաղթելու։ Ժողովուրդը կարծես ընդհանրապէս զգում է, որ այս նահանգապետը աւելի բարի պէտք է լինի և Ղորին կայսերական Բարձրութեան կովկասեան փոխարքային խստարհաբար կը խնդրի իր բարձր պաշտպանութիւնը չը զլանալ թագաւոր Կայսրի հարիւրաւոր հաւատարիմ և աշխատասէր հպատակներին միջոց տալու իրանց աշխատանքով հոգերը մշակելու։»

—

Գ. բժիշկ Ղևանասարգեանց խնդրում է մեզ յայտնել, որ «հայոց բարեգործական ընկերութեան» ժողովի վերջին նիստը, որ նշանակված էր կիրակի օր, մարտի 8-ին, Արժբատնու թաղամասում, չը պէտք է կարողանայ կայանալու, այն մեծ խորին ապի պատճառով, որ յանկարծակի սիրեց ամբողջ Կայսերութեան մէջ։ Մի այլ, յարմար ժամանակին յարգելի հասարակութիւնը հրաւիրված կը լինի նոր յայտարարութեամբ։

—

ՕԴԻՍԱՆԻՑ մեզ գրում են. «Սանփան Սաֆրազանց, որ Օդեսայի հանրակրթարանի ուսանող էր և յանախ թղթակցում և աշխատակցում էր «Մշակին», յունվարի 23-ին ներկայ թուի վաճառանվեցաւ ուզեցի բորբոքումից։ Յունվարի 25-ին հանգուցեալի ընկերները հանդիսաւոր թաղեցին երիտասարդին, զարդարելով նրա դագաղը ծաղկեայ պսակներով։ Տխուր է, երբ այդ տեսակ հասակում մեռնում է մի երիտասարդ, որ ամեն կերպ անտեսական և բարոյական նեղութիւններ կրելով, անխոնջ աշխատում էր, ուսում էր առնում, երբեմն մի ժամանակ օգտակար լինելու իր ազգին։»

—

Մի թիֆլիսեցի պարոն պատմում է մեզ հետևեալը. «Իմ հարևանները ամեն օր վաղ առաւօտեան, երբ ես դեռ հոգիս լուացվել, հագնվել եմ, բախում են արդէն ոնոնակիս դրանը և պահանջում են այն առաւօտեայ «Մշակի» համարը։ Նրանք բոլորն էլ, մեռելից մեռելք խլելով, մեծ հետաքրքրութեամբ կարդում են «Մշակը»։ Բայց երբ մի օր ես նրանց հարցրի թէ ինչն է առնում հինգ կոպէկով լրագրի համարները մատակայ խառնութիւնում, որտեղ «Մշակը» հատով է ծախվում,—նրանք պատասխանեցին թէ՝ ի ն գ կ օ պ է կ ը թանգ է։ Նոյն անձինք ամեն գիշեր մեծ փոցեր են ծախում կլուբներում, կամ ժամանակ առ ժամանակ գնում են Օրթանալայի այգիները և այնպէս չանալ քէֆերի ժամանակ ընծայում են մի օր և է զուռնայուն կամ պար եկողին քսան և հինգական բուրլիներ։ Այդպէս է թիֆլիսեցի հայը. անհրաժեշտի համար, մշտապէս զարգացման համար, նա խնայում է օրական 5 կոպէկ, ասելով թէ թանգ է, իսկ անբարոյական քէֆի, շռայլութեան համար, հարիւր բուրլիներ չի խնայի։ Ի՞նչ առաջադիմութիւն կարելի է սպասել այդ տեսակ անբարոյական ժողովրդից։»

—

ԱՐԴՈՒԻՆԻՑ մեզ գրում են. «Ձեր լրագրի անցեալ 1880 թ-ի № 225 մէջ կարդացինք իբրէ թէ Արդուինի հայ-կաթոլիկները այն ստոնման մտնեանց են, որ մի հայ-կաթոլիկ մանկարարի կին հրաժարեցրած է եղել կաթոլիկ հոգեւորականութեան հրամանով կաթոլիկ եկեղեցու գրկից, որովհետև օգնութիւն էր հասցրել մի հայ-լուսաւորչական ծերնդկանին։ Այդ լուրը մենք կարդացինք մեծ ապշութեամբ, քանի որ այդ տեսակ գէպք ոչ այժմ և ոչ առաջ երբէք պատահած չէ Արդուինի մէջ։ Ընդհակառակն մեծ ներդաշնակութիւն է տիրում քաղաքիս երկու դաւանութիւնների հայ հասարակութիւնների մէջ։ Գրեթէ նպատակը միայն երկու դաւանութիւնների մէջ թշնամութիւն սերմանելու կարող է լիներ։ Թող գրողը հաստատ իրազեկութիւնը, ապա թէ ոչ այդպիսի գրպարտութիւններ ոչ միայն մեր ազգի, այլ և ուրաց վրա վատ ազդեցութիւն կարող են ունենալ և նրանց մեր մասին գէշ գաղափար տալ։»

—

Անցեալ տարի դեկտեմբերին թուրք ասպատները կոտրեցին Նատիլուզից 8 վերստ հեռու գտնվող հայոց Ղազիկ-Վանքը տանելով մինչև 300 բուրլի գումարի իրեղէններ։ Մեզ պատմում են որ այս օրերս, չնորհով Վարայեանցի պրոտաւ ոգ. Լինդէվիլի 5 թուրքեր կալանաւորվեցան, բերվեցան Թիֆլիս և բանտարկվեցան։ Ղազիկ-Վանքի կողոպտված իրեղէնների մի մասը գտնված է։ Ընթերցողին յայտնի է որ վերջին երկու ամիսներում Թիֆլիսումն էլ կողոպտված են եղել բազմաթիւ եկեղեցիներ, բայց մինչև այժմ Թիֆլիսի պոլիցիան ոչ մի ասպատակի չը կարողացաւ գտնել և կալանաւորել։

—

ԴԻՍՇԷԹԻՑ մեզ գրում են. «Մեր փոքրիկ և նահապետական քաղաքը միայն դրանով էր բաղդաւոր, որ նրա մէջ երբէք գողութիւն չէր պատահում։ Բայց ահա մի ամիս չը կայ որ երկու խուշար գողութիւններ պատահեցան մեզ մօտ. երկու տուն կողոպտեցին և նրանց մէջ գտնված բոլոր կայքը տարան։ Այս գժբաղդութիւնն առաջն առնելու համար հարկաւոր է մի քանի կամաւորներ և անցաթուղթ չունեցող անձինք հետացնել Դուշէթից, մեր ամրոցի քաղաքում գտնված եօթ թէ ութ լրտեսներին ուղղել, նրանց վրա այնքանն էլ աւելացնել, նրանց վատել ինչպէս հարկն է և պոլիցիային էլ պատիրել գիշերները հսկողութիւն ունենայ։»

—

Պատանեաց ԲԱԴՈՒԻ «Մարդասիրական» ընկերութեան 1880 թ-ի դրամական հաշիւը և պարտաւորութիւն ենք համարում ասել՝—թող չը նեղանայ մեզ վրա «Մարդասիրական» ընկերութիւնը,—բայց մեզ անհնարին է տպել մեր լրագրում այդ տեսակ անհայտին հաշիւներ։ «Մշակի» միակ արդիւնքը յայտարարութիւնների բաժին է, իսկ տպելով յայտարարութիւնների երեսի վրա մի հաշիւ, որ չորրորդ երեսի գրեթէ կէսը կը բռնի, մենք այն օրը կը զրկվինք մեր լրագիրը իր սովորական արդիւնքից։

—

ՎԵՐԻՆ-ԱԴՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են, որ այստեղի Ալբ. Փրիստափոր եկեղեցում հանդիսաւոր կերպով տօնվեցաւ Վ ա ր դ ա ն ա ն ց յիշատակը Տէր-Մեսրոպ քահանան տաճին յարմար քարոզ ասաց։

քիմ, թէ չը ջրակայ գիւղերի բոլոր զուռնաչիները, բոլոր նագարաչիները, միասին հաւաքված, կազմել էին մի անպիսի նուագախումբ։ Զուռնայի դիմ. հրվլուն, ոսկանչ ծակոց ձայնը, նագարայի վայրենի գրմրդրմրոցը, միախառնվելով, գղրդեցնում էին լեռները մի խառնաձայն, անախորժ ներդաշնակութիւնով, թէև դա բոլորին դիւր էր գալիս, բացի այն լեռների վրա արածող ոչխարներից, որոնք խրաչելով, սկսան այս կողմ և այն կողմ փախչել, և բացի հովիւների շներից, որոնք այդ անակնկալ աղմուկը լսելով, սկսեցին զառն ձայնով ոռնալ, սկսեցին հեծկլտալ, կամ բարկացած կերպով հաչել։ Այդ խառնուն արարածները, երևի, աւելի կիրթ հաշակ ունէին, քան թէ ամբոխը, որ այդ միջոցում հիացած էր այդ տարօրինակ երաժշտութիւնով։

Նուագախումբը բոլորից առաջ էր ընկած և ածում էր։ Նրանց ետեից հանդիսաւոր կերպով բերում էին այն անասունները, որ այսօր պիտի մրցութիւն անէին միմեանց հետ։ Նախ բերում էին մեծ պարանի երեսի խոյը, կապված մի երկայն չղթայով, որի մէջ տեղը անց էր կացրած խոյի պարանոցով, իսկ չղթայի երկու ծայրերը բռնել էին երկու ուժեղ մարդիկ։ Նրա առաջին, ոչխարապոյտ եղջիւրները ներկել էին վարդի գունով և զարդարել էին փոքրիկ զանգակներով։ Նոյն գունով, խայտաճամուկ կերպով, ներկել էին նրա մարմնի սպիտակ բուրդը։ Մեծ պարանի խոյի ետեից բերում էին Արշիլ թաւարի որդու խոյը, նոյնպէս չղթայով կապված, նոյնպէս զարդարած փոքրիկ զանգակներով, այն զանազանութեամբ միայն, որ դրա թէ բուրդը և թէ եղջիւրները ներկված էին կապույտ գունով և ոչ վարդագոյն, որ միայն մեծ պարանը իրաւունք ունէր գործ ածելու իր անասունների վրա *)։ Դրանցից յետոյ, նոյնպէս հանդիսաւոր կերպով բերում էին մեծ պարանի մեծ չուանը, զարձեալ չղթայով կապած և չղթայի երկու ծայրերը երկու մարդիկ բռնած։ Շատ ճակատը, պատը, թաթիկները և մարմնի վրա տեղ-տեղ ներկված էին նոյնպէս վարդի գունով։ Նրանից յետոյ նոյն փառքով բերում էին Լեռան թաւարի սպիտակ չուանը։ Յետոյ երկու ծառաներ գրկած բերում էին Զաքարա և Ալէքսի թաւարի սրդիների ագռաղաները, որոնց խայտագոյն փնաւորները, բացի իրանց բնական գոյներից, ներկված էին և արհեստական գոյներով։ Ագռաղների պարանոցից մի-մի փոքրիկ բժժոներ էին կախված։ Յետոյ երկու ուրիշ ոչխարներ, ձեռքներից քարշ տուած, տանում էին երկու վանդակներ, որոնց մէջ մի-մի կաքաւներ էին դրած։ Վանդակները ամեն կողմից ծածկված էին անթափանցիկ կտաւով։ Դրանցից յետոյ երկու ուրիշ ոչխարներ տանում էին երկու ուրիշ փոքրիկ վանդակներ, որոնց մէջ մի-մի լոր էր դրած։ Այդ վանդակները նոյնպէս ծածկված էին անթափանցիկ կտաւով։ Պէտք է նկատել, թէ խոյերի, թէ շների և թէ աքաղաղների աչքերը, բոլորին էլ կապած էին կտաւով։ Այդ նրա համար էր, որ միմեանց չը տեսնեն, որ միմեանց հետ չընտելանան, որ նրանց աչքերը յանկարծ բաց անեն այն ժամանակ, երբ պիտի բաց թողնէին միմեանց հետ կռուելու։

Խոյերից, շներից, աքաղաղներից, կաքաւներից ու լորերից յետոյ գալիս էր մեծ պարանը իր սև նժոյգի վրա նստած։ Նրան հետևում էին նրա թիկնապահները և ազնուականութիւնը։ Բոլորն էլ ձիաւորված էին։

Երբ այդ հանդիսաւոր պրոցեսիան անց էր կենում, երբ բազմաթիւ զուռնաները ու նագարաները որսում էին և երբ խառնաշփոթ ամբոխը ամեն կողմից վայրենի ազաղակներով վրա էր թափվում, այդ միջոցում հանդիսականներից մի մարդ մատնցաւ մեծ պարանի մեծ շանը, այնպիսի մի սրտաշարժ կերպարանքով, կարծես, նա առաջին անգամ հանդիպում էր հին բարեկամին, մտերիմ ընկերոջը, երկար տարիների անջատումից յետոյ։ Նա պատրաստվում էր գրկվել սիրելի անասունի հետ, համբուրել նրան, բայց նրա խղճը անկատար մնաց, որովհետև այդ ժամանակ սև ձիաւորը բաժանվելով իր խումբից, մի անկիւնաքիում վրա հասաւ, և մարդկի հարուածներով նրան հեռացրեց, գոչելով.

—Խոզի զաւակ, ինչու ես նեղացնում շանը...

Թէև շան աչքերը կապած էին, բայց խելացի անասունը, կարծես, զգաց թէ ով էր իրան մօտեցողը, մի անհանգիստ շարժում գործեց, գլուխը շուռ տուեց, ուզում էր վազել նրա ետեից, փաթաթվել նրա ոտներով, յայտնել իր սէրը ու կարօտը, բայց նրա շղթայից բռնող երկու ուժեղ մարդիկը թոյլ չը տուեցին։ Մատնցողը շատ նախկին սէրը, գիւղացի Լենոն էր, որ սև ձիաւորի մարդկանցից զարհուրած, ստոնված, այժմ կորել էր ամբոխի մէջ։

—Լսեցէք ինչ ասեց նրան մեծ պարանը,—լսեցէք, հարցնում էին միմեանցից ռամիկները։

—Վոնց չը լսեցինք, պատասխանում էին միմեանց,—ասաց «խոզի զաւակ»... Հիմայ ինչ կը փրվի Լենոն, որ մեծ պարանը նրան ասաց «խոզի զաւակ»...

Լենոյի կերած մարդկանցը հաշուի չէին առնում, բայց նրան բախտաւոր էին համարում, որ նա պատիւ ունեցաւ լսելու մեծ պարանից մի այսպիսի փաղաքշական խօսք...

Ձիաւորների խումբը, նուագածուները և մերցող անասունները արդէն հասել էին գեղի ամենամեծ, մեծ